Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ
Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ի Ց

28 ապրիլի 2016 թվականի N 16

---

29. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

1. Հավանություն տալ շինարարության ոլորտի բարեփոխումների ծրագրին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն արձանագրային որոշման 1-ին կետով հավանության արժանացած շինարարության ոլորտի բարեփոխումների ծրագրում նշված պատասխանատու մարմինների ղեկավարներին՝ շինարարության ոլորտի բարեփոխումների միջոցառումների իրականացման ընթացքի մասին տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին՝ համաձայն հավելվածի ժամանակացույցի:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարին՝ ամփոփել սույն արձանագրային որոշման 2-րդ կետում նշված տեղեկատվությունները և հավելվածի յուրաքանչյուր միջոցառման համար, ըստ ժամանակացույցի, համապատասխան հաշվետվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. մայիսի 2
Երևան

16-29ardz.voroshum

Հավելված
ՀՀ կառավարության 2016 թ.
ապրիլի 28-ի նիստի N 16
արձանագրային որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Միջոցառման նկարագիրը	Պատասխանատու մարմինը	Միջոցառման նպատակը	Միջոցառման խնդիրը	Ակնկալվող արդյունքը	Կատարման ժամկետը	Ֆինան-սավորման աղբյուրը
1	2	3	4	5	6	7	8	9
1.	Շինարարության ոլորտում աշխատավարձի հաշվարկման գործակցի և միջին ամսական աշխատավարձի չափի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման պահանջի ամրագրում	ՀՀ ֆինանսների նախա-րարության «Գնագոյաց-ման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հրա-պարակվող տեղեկագրի «Ծանոթություն» բաժնի $K_{մեք. շահ}$ - մեքենաների ու մեխանիզմների շահագործման ծախսերի անցման գործակցից հետո ավելացնել նաև ՀՀ կառավարության 2011 թ. հունիսի 23-ի N 879-Ն որոշմամբ նախատեսված՝ **Աշգ** - աշխատավարձի հաշվարկման գործակիցը և շինարարության ամսական միջինացված աշխատավարձի չափը՝ համաձայն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների:	ՀՀ ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ	Շինարարության արժեքի համապա-տասխանեցումը բնագավառի տնտե-սական փոփոխու-թյուններին՝ յուրաքանչյուր ամսվա հաշվարկով	Շինարարության նախահաշվներում յուրաքանչյուր ամսվա աշխատավարձի հաշվարկման համար համապատասխան գործակցի կիրառում	Առաջիկա տարիներին շինարարության ոլորտը կարգավորող իրավական դաշտի համապատասխան փոփոխություններ, որը խթան կհանդիսանա քաղաքաշինական գործունեության կայուն զարգացմանը	Արձանագրային որոշման ընդունման օրվան հաջորդող ամիս	Ֆինանսա-վորում չի պահանջվում:

1	2	3	4	5	6	7	8	9
2.	Շինարարության որակի տեխնիկական հսկողության ոլորտում բարեփոխումների համալիր ծրագրի մշակում	Շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձանց որակավորման աստիճան շնորհելու և պատասխանատվությունը մեծացնելու նպատակով նոր մոտեցումների մշակում: Հարցը կարգավորել ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի N 855-Ն որոշման մեջ առաջարկելով կատարել համապատասխան փոփոխություններ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	Շինարարության որակի տեխնիկական հսկողության աշխատանքների որակական հատկանիշների բարձրացում և տեխնիկական հսկողություն իրականացնող սյուբեկտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման նոր մոտեցումների ու չափորոշիչների սահմանում	Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման գործընթացներում՝ - անորակ շինարարական աշխատանքներ, - տեխնիկական հսկողության ոչ պատշաճ կատարում	Առաջիկա տարիներին շինարարության ոլորտը կարգավորող իրավական դաշտի համապատասխան փոփոխություններ, որը խթան կհանդիսանա քաղաքաշինական գործունեության կայուն զարգացմանը	01.07.2016 թ.	Ֆինանսա-վորում չի պահանջվում:
3.	Շինարարության հեղինակային հսկողության ոլորտում բարեփոխումների համալիր ծրագրի մշակում	Հարցը կարգավորել ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշմամբ ընդունված կարգի մեջ կատարել համապատասխան փոփոխություններ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	Շինարարության հեղինակային հսկողության ծառայության պատասխանատվության բարձրացում, ծառայության դիմաց վճարման կարգի վերանայում	Տարբեր հեռավորություններ ունեցող օբյեկտների հեղինակային հսկողության ծառայությունը գնահատվում է միևնույն գործակցով	Ստեղծել նախապայմաններ հեղինակային հսկողությունը պատշաճ կատարելու համար, որը կնպաստի շինարարական արտադրանքի որակի բարձրացմանը	01.07.2016 թ.	Ֆինանսա-վորում չի պահանջվում:
4.	Բնակչության կողմից կատարված մասնավոր շինարարական աշխատանքների ծավալների հավաքագրում	Բնակչության միջոցների հաշվին իրականացվող մասնավոր շինարա-րության ծավալների հավաքագրման համար անհրաժեշտ ձևաչափի մշակում և իրավական հիմնավորումների	ՀՀ քաղաքաշինության նախարարութ յուն	Ոլորտում իրականացվող շինարարության ծավալների հավաքագրում և վերլուծում	Բնակչության կողմից կատարված մասնավոր շինարարական աշխատանքների ծավալների վերաբերյալ տեղեկատվության բացակայում	Բնակչության միջոցների հաշվին իրականացվող մասնավոր շինարարության ծավալների վերաբերալ ճշգրիտ տեղեկատվության	10.05.2016 թ.	Ֆինանսա-վորում չի պահանջվում:

1	2	3	4	5	6	7	8	9
		ձևակերպում: Հարցը կարգավորել *ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 9-ի նիստի N 42 արձանագրության 12-րդ կետով* հավանության արժանացած շինարարական աշխատանքների ծավալների հավաքագրման վերաբերյալ որոշումում համապատասխան փոփոխություններ կատարելով				տիրապետում		
5.	Նախագծային աշխատանքներին առնչվող իրավական ակտերում մասնագիտական ձևակերպումների հստակեցում	Հարցը կարգավորել ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն և 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումների մեջ առաջարկելով կատարել մասնագիտական ձևակերպումների ճշգրտումներ	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	Իրավական ակտերում մասնագիտական ձևակերպումների կիրառում	Նախագծային աշխատանքներին առնչվող իրավական ակտերում «Տեխնիկական բնութագիր» բառակապակցությունը փոխարինել «նախագծային առաջադրանք» բառակապակցությամբ	Քաղաքաշինական փաստաթղթերում «նախագծերի առաջադրանք» մասնագիտական ձևակերպման կիրառում	10.07.2016 թ.	Ֆինանսա-վորում չի պահանջվում:
6.	Սեյսմակայուն շինարարության նախագծային նորմերի համապատասխանեցումը միջազգային նորմերին և կանոններին	Կատարել համապատաս-խան փոփոխություններ ՀՀՇՆ II – 6.02.2006 «Սեյսմակայուն շինարարություն» նախագծման նորմերում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	Սեյսմակայուն շինարարության նախագծում՝ միջազգային նորմերին համապատասխան	Գործող «Սեյսմակայուն շինարարություն» նախագծման նորմերի որոշ պահանջներ չեն համապատասխանում միջազգային նորմերի պահանջներին	Սեյսմակայուն շինարարության նախագծում՝ միջազգային նորմերին համապատասխան	20.12.2016 թ.	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ

1	2	3	4	5	6	7	8	9
7.	«Շենքերի և շինու-թյունների մատչելիու-թյունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի համապատաս-խանեցումը միջազգային նորմերին	Կատարել համապատասխան փոփոխություններ ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄԱՆ 3.02.05.2003) շինարարական նորմերում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	Բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժի համար ավելի մատչելի պայմանների ապահովում	Գործող «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» նախագծման նորմերի որոշ պահանջներ չեն համապատասխանում միջազգային նորմերի պահանջներին	Բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժի համար ավելի մատչելի պայմանների ապահովում	20.12.2016 թ.	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ